6 փետրվարի 2020 թվականի N 118 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 1198-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի սեպտեմբերի 12-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծված (ներմուծվող) տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը, հումքը և (կամ) նյութերը ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ԱՐԻԿՈ-ԳՈՌ» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 1198-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) հավելվածը 3-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ և 5-րդ կետով.

«

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 4. | 4802551500 | Գրելու, տպագրության կամ գծագրական այլ նպատակներով օգտագործվող ոչ կավճապատ թուղթ և ստվարաթուղթ, 1 մ²-ի համար 40 գ կամ ավելի, բայց 150 գ-ից ոչ ավելի զանգվածով, գլանափաթեթներով.<br>---1 մ²-ի համար 40 գ կամ ավելի, բայց 60 գ-ից պակաս զանգվածով | տպագրական օֆսեթ թուղթ՝ գլանափաթեթով | կգ | 1 200 000 | Հնդկաստան, Չինաստան, Ինդոնեզիա, ԵՄ, Ռուսաստան | 518 400 000 |
| 5. | 4802559000 | Գրելու, տպագրության կամ գծագրական այլ նպատակներով օգտագործվող ոչ կավճապատ թուղթ և ստվարաթուղթ, 1 մ²-ի համար 40 գ կամ ավելի, բայց 150 գ-ից ոչ ավելի զանգվածով, գլանափաթեթներով.<br>---1 մ²-ի համար 80 գ կամ ավելի զանգվածով | տպագրական օֆսեթ թուղթ՝ գլանափաթեթով | կգ | 120 000 | Հնդկաստան, Չինաստան, Ինդոնեզիա, ԵՄ, Ռուսաստան | 51 840 000 |

».

2) հավելվածի «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերության մեջ «260 368 200» թիվը փոխարինել «830 608 200» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2020 թ. փետրվարի 7
Երևան

20-118